ՀՀ սոցիալ-տնտեսական դրությունը և հասարակական-քաղաքական կյանքը

գ. Կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: «Միացյալ և Անկախ Հայաստանի ակրը»

Ժողովրդավարական պետության քաղաքական համակարգի անբաժան մասն են կազմում կուսակցությունները: Հայաստանի անկախության հռչակման պահին արդեն գոյություն ուներ պատմականորեն ձևավորված կուսակցությունների քիչ թե շատ կայուն քաղաքական համակարգ: Հայաստանի Հանրապետության հասարակական–քաղաքական դաշտում գործող կուսակցությունների ընդհանուր թվաքանակը հասնում էր 8–ի: Դրանցից երեքը հայ ազգային ավանդական՝ Սոցիալ–դեմոկրատական հնչակյան (ՍԴՀԿ), Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) և Հայ սահմանադրական ռամկավար (ՀՍՌԿ) կուսակցություններն էին: 1917 թ. ապրիլին հիմնվեց ազգային–ազատական Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), որն առաջացավ մշակականների և հայ կադետների միաձուլումից: Ինչ վերաբերում է Վերակազմյալ հնչակյաններին, ապա նրանք Հայաստանի Հանրապետության տարածքում բնավ չեն գործել: Վերոհիշյալ քաղաքական կուսակցությունները հետամուտ էին հայ ազգային արժեքային համակարգին ու ազգային իդեալներին, սակայն իրարից տարբերվում էին համազգային խնդիրների լուծման ուղիների հարցում ունեցած տարբեր մոտեցումներով ու գործելակերպով:

Հայաստանի Հանրապետությունում գործող կուսակցությունների մի խումբ էլ XX դ. սկզբին համառուսաստանյան սոցիալիստական (սոցիալ–դեմոկրատական և էսէռական) կուսակցությունների ազդեցությամբ սոցիալ–դասակարգային պայքարի հենքի վրա առաջացած հայկական կազմակերպություններն էին (հատվածները), որոնք, 1918–1920 թթ. ընթացքում առանձնանալով, փաստորեն դարձան ինքնուրույն (ինքնավար) կուսակցություններ: Խոսքը վերաբերում է հայ սոցիալ–դեմոկրատ մենշևիկներին ու բոլշևիկներին, հայ սոցիալիստ–հեղափոխականներին (էսէռներին) և Սոցիալ–դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը (ՍԴԲՀԿ) կամ, այսպես կոչված, սպեցիֆիկներին:

Այդ կուսակցությունները լրացնում էին Հայաստանի քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը՝ «աջ» (աջակողմյան), «կենտրոն» (կենտրոնամետ) և «ձախ» (ձախակողմյան): Ըստ իրենց սոցիալ–տնտեսական պլատֆորմի ու ազատական (լիբերալ) գաղափարախոսության՝ ՀԺԿ–ն ու ՀՍՌԿ–ն կազմում էին աջակողմյան թևը: Թեև իր սոցիալիստական ծրագրային պահանջներով ՀՅԴ–ն մոտենում ու նմանվում էր ձախերին, սակայն գործնական քաղաքականության ընագավառում պաշտպանում էր նաև մասնավոր սեփականատիրական–շուկայական հարաբերությունները և տնտեսվարման ազատությունը: Նման միջանկյալ դիրք գրավելու պատճառով ՀՅԴ–ն զբաղեցնում էր «կենտրոն» կամ «ձախ» կենտրոնամետ թևը: Մնացած հինգ կուսակցությունները՝ սոցիալ–դեմոկրատ մենշևիկներն ու բոլշևիկները, էսէռները, սպեցիֆիկները և ՍԴՀԿ–ն իրենց ընդգծված սոցիալիստական ուղղվածության և դասակարգային բովանդակության տեսակետից կազմում էին ձախակողմյան թևը և պաշտպանում էին արտադրության միջոցների պետական սեփականության և, ընդհանրապես, տնտեսության պետական կառավարման գերակայությունը:

Հայաստանի հասարակական–քաղաքական կյանքին մասնակցության տեսակետից հանրապետությունում գործող կուսակցությունները կարելի է ստորաբաժանել այսպես՝ կառավարող և ոչ կառավարող կամ խորհրդարանական և ոչ խորհրդարանական: Հայաստանի Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում ՀՅԴ–ն եղել է հիմնական կառավարող կուսակցությունը: Վերջինս երկու անգամ կազմել է կոալիցիոն կառավարություն. մի դեպքում՝ ՀԺԿ–ի հետ՝ 1918 թ. նոյեմբեր – 1919 թ. հունիս ամիսներին, մյուս դեպքում՝ էսէռների հետ՝ 1920 թ. նոյեմբեր–դեկտեմբերին:

Հայաստանի երկու գումարման խորհրդարանների աշխատանքներին մասնակցության տեսակետից կուսակցությունների մի մասն ունեցել է իր համապատասխան խմբակցությունները, իսկ մյուս մասը բավարար սոցիալական հենարան չունենալու, քաղաքական անտարբերության, բոյկոտի և այլ պատճառներով առհասարակ խորհրդարանական որևէ ներկայացուցչություն չի ունեցել: Առաջին գումարման խորհրդարանում պաշտոնապես գործել են չորս կուսակցական խմբակցություններ՝ ՀՅԴ, ՀԺԿ, սոցիալ–դեմոկրատ մենշևիկներ ու բոլշևիկներ և էսէռներ: Երկրորդ գումարման խորհրդարանում կուսակցական խմբակցություն են ունեցել միայն ՀՅԴ–ն և էսէռները: Մյուս կուսակցությունները՝ ՍԴՀԿ–ն, ՀՍՌԿ–ն և սպեցիֆիկները, խորհրդարանում առհասարակ ներկայացուցչություն չեն ունեցել:

Թե՛ խորհրդարանում և թե՛ նրանից դուրս քաղաքական դաշտի աջ թևը ներկայացնող ՀԺԿ հայտնի գործիչներից էին Մ. Պապաջանյանը, Ս. Հարությունյանը, Հ. Առաքելյանը, Լ. Ղուլյանը, Դ. Մելիք–Ղարագյոզյանը և ուրիշներ: ՀԺԿ–ն ուներ ընդգծված հակասոցիալիստական ուղղվածություն և գաղափարական ու սոցիալ–տնտեսական քաղաքականության հարցերում լիովին պաշտպանում էր ռուսական ազատական Սահմանադրական ժողովրդավարական (կադետների) կուսակցության ծրագրային հիմնադրույթները կապիտալի, մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների հաստատման մասին[156]: Հայաստանի անկախության հռչակումից հետո կուսակցության գործունեության ծանրության կենտրոնն աստիճանաբար փոխադրվեց Երևան: Ուժեղացվեց ՀԺԿ Երևանի վարչությունը: 1918 թ. օգոստոսի 14–ից Երևանում սկսեց լույս տեսնել կուսակցության Երևանի կոմիտեի «Ժողովուրդ» պաշտոնաթերթը: ՀԺԿ գերագույն մարմինը՝ կենտկոմը, բավականին ուշացումով՝ 1919 թ. հունիսին, Թիֆլիսից փոխադրվեց Երևան: Սակայն նրա ոչ բոլոր կարողունակ ուժերը հայրենիք եկան՝ գերադասելով Թիֆլիսի նպաստավոր պայմանները:

ՀԺԿ–ն Հայաստանի անկախ պետականության ամենաջերմեռանդ պաշտպաններից էր: Լինելով զուտ արևելահայ կուսակցություն՝ Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում միակողմանիորեն չէր ջատագովում ռուսական կողմնորոշումը. ինչպես նշում է «Ժողովուրդ» թերթը, եթե հայ ժողովրդի փրկությունը պահանջի ընդունել մի այնպիսի կողմնորոշում, որը հակասի Ռուսաստանի շահերին, ՀԺԿ–ն դա կանի առանց վարանման[157]: Ժողովրդականները հանգել էին այն ճիշտ հետևությանը, որ հայ ժողովուրդը պետք է ունենա միայն մեկ՝ հայկական, կողմնորոշում: Հայ–վրացական սահմանային ընդհարման կապակցությամբ նրանք անվերապահորեն հանդես եկան Լոռու շրջանը և Ախալքալաքը Հայաստանին միացնելու վճռականությամբ: Ավելին, լինելով ազգային տիպի կուսակցություն՝ նրանք պաշտպանում էին միացյալ Հայաստանի գաղափարը: ՀԺԿ գործունեությունը թե՛ խորհրդարանում և թե՛ նրանից դուրս եղել է պատասխանատու և կառուցողական: Լինելով ՀՅԴ գլխավոր մրցակիցը՝ ՀԺԿ–ի ընդդիմությունն ուներ ոչ թե հակապետական, այլ հակադաշնակցական միտում:

---

156 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 1:

157 Տե՛ս Ժողովուրդ, 29 օգոստոսի, 1918:

ՀՀ քաղաքական դաշտում կենտրոնամետ ուղղվածություն ունեցող ՀՅԴ–ն ազգային–քաղաքական խնդիրներում (Հայկական հարց, անկախ պետականության կայացում և այլն) աներկբայորեն կանգնած էր պետական–ազգային շահերի պաշտպանության դիրքերում, սակայն սոցիալ–ամտեսական բնույթի խնդիրներում երբեմն ավելի հակվում էր գնալ ձախակողմյան թևը և նպաստում կիսասոցիալիստական (բանագրավումների, առևտրի պետական մենաշնորհի և այլն) ձեռնարկների իրագործմանը:

Ցարիզմոյնյան կուսակցություններին բնորոշ էին հայանպաստ քաղաքական դիրքորոշումը և ընդգծված սոցիալիստական միտվածությունը: Սոցիալ–դեմոկրատներին ու Էսէռներին թե՛ խորհրդարանում և թե՛ նրանից դուրս ամենից ավելի հետաքրքրում ու մտահոգում էին Հայաստանի աշխատավորության և գաղթականության վիճակը, բնակչության պարենավորումը, կրթությունը և այլ հարցեր: Այդ կուսակցությունների բնորոշ դրսևորումներից էին նրանց ընդգծված ուռուսական կողմնորոշումը և գործնականում Հայաստանի քաղաքական անկախությանը դեմ լինելը: Օրինակ՝ մենշևիկ Թ. Ավդալբեկյանը գտնում էր, որ «վտանգալից ու ծանրալուծ» անկախության փոխարեն իրենք՝ հայ սոցիալ–դեմոկրատները, քարոզում են և նաև ապագայում են քարոզելու մեզ վերակազմված Ռուսաստանի իրավահավասար ժողովրդների ազատ ու մեծ գերդաստանի մեջ[158]: Հայ Էսէռները ևս գտնում էին, որ Հայաստանը պետք է դաշնային կապերով միանա Ռուսաստանին՝ կարևորություն չտալով այնտեղ գոյություն ունեցող վարչակարգին[159]: Սակայն ավելի ուշ՝ 1920 թ. երկրորդ կեսից, սկսեցին պաշտպանել Հայաստանի անկախությունը: Ավելին՝ 1920 թ. նոյեմբերին նրանք մտան կառավարության մեջ կազմելով քաղաքական կուսակցիա ՀՅԴ–ի հետ:

Ցարիզմոյնյան կուսակցությունների ներքևում հետևողությունների մեկն էլ այն էր, որ նրանք կազմակերպական տեսակետից չունեին բավարար ինքնուրույնություն: Այսպես՝ հայ սոցիալ–դեմոկրատները կազմակերպական և քաղաքական առումով ներառվում էին ՌՍԴԲԿ Անդրկովկասի շրջանային կոմիտեին, որի ղեկավարությունը վրաց մենշևիկների ձեռքում էր: 1918 թ. նոյեմբերի 21–ին՝ հայ–վրացական բախման շրջանում, հայ սոցիալ–դեմոկրատներն անջատվեցին: Հայաստանում ստեղծվեց ինքնավար մարմին՝ բյուրո, և Երևանում պետք էր տեսնել ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության «Կայծ» պաշտոնաթերթը: Այսպիսով ինտերնացիոնալիստական որակվող այդ կուսակցությունն իր կազմով ու կազմակերպական կառուցվածքով դարձավ ազգային: Հայ սոցիալ–դեմոկրատ մենշևիկ Երևանի գործիչներից էին Ա. Երզնկյանը, Ս. Փիրումյանը, Գ. Ղարաջյանը (Արկունեց), Թ. Ավդալբեկյանը, Ա. Զուրաբյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ:

1918 թ. նոյեմբերին նաև Հայաստանի բոլշևիկները կազմակերպական առումով անջատվեցին մենշևիկներից[160]: Նույն ամսին Երևան ժամանեց Ռ.(բ)Կ Թիֆլիսի կոմիտեի անդամ Մտեփան Ալավերդյանը, որի նախաձեռնությամբ տեղի բոլշևիկները վերջնականապես անջատվեցին մենշևիկներից՝ ստեղծելով ինքնուրույն կուսակցական ղեկավար մարմին, իսկ «Ռոսբ»–ը դարձավ նրա պաշտոնաթերթը: Դրանից հետո մենշևիկների պահանջով միակ բոլշևիկ պատգամավոր Ա. Մելիքյանը հեռացվեց սոցիալ–դեմոկրատների խմբակցությունից ու խորհրդարանից, իսկ նրա տեղը զբաղեցրեց մենշևիկ Գ. Ղարաջյանը:

Բավականին ուշացումով 1919 թ. փետրվարին, հայ Էսէռները նույնպես իրենց կուսակցության լիազոր մարմինը՝ Հայաստանի կոմիտեն, փոխեցին Երևանում, որը պետք է ղեկավարեր հայ Էսէռների գործունեությունը հանրապետության ամբողջ տարածքում: 1919 թ. հունիսից սկսեց լույս տեսնել նրա պաշտոնաթերթի «Սոցիալիստ հեղափոխականներ»: Ճանաչված Էսէռական գործիչներից էին Լ. Թումանյանը, Ա. Մոնդակյանը, Վ. Մինախորյանը և ուրիշներ:

Ինչ վերաբերում է ոչ խորհրդարանական կուսակցություններին՝ ՀՍՌԿ–ին, ՍԴՀԿ–ին և սպեցիֆիկներին, ապա նրանք հանրապետությունում չոչոփելի կշիռ չունեին: Եզնունց մազապուրծ, տարագիր Հայության հետ միասին Անդրկովկաս փոխադրված ՀՍՌԿ մի հատվածի ղեկավար մարմինը սկզբում հաստատվեց Թիֆլիսում, ապա 1919 թ. առաջին ամիսներին նրա կենտրոնական խորհուրդը տեղափոխվեց Երևան, իսկ մարտի 24–ից սկսեց լույս տեսնել «Վան–Տոսպ»ը, որին սեպտեմբերի 22–ից փոխարինեց «Հայաստանի ձայն» եռօրյա պաշտոնաթերթը: Փաստորեն, Հայաստանում գործում էր համահայկական ՀՍՌԿ հայաստանյան հատվածը, որը գաղափարաքաղաքական առումով արտահայտում էր առաջին հերթին Հայաստանում և Կովկասում ապրստամած արևմտահայ գաղթականության քաղաքական մտայնությունները, ձգտումներն ու հաշիվը[161]:

Հայ ռամկավարները սկզբունքորեն ընդունում ու պաշտպանում էին հայոց անկախ պետականության գաղափարը, արտահայտվում էին հայրենիքի վերաշինության օգտին, սակայն թեթևախաս էին դաշնակցական կառավարության նկատմամբ, ունեին ընդդիմադիր կեցվածք և գործնականում ակտիվ մասնակցություն հանդես չէին բերում պետական ու հասարակական կյանքին:

Հանրապետության հասարակական–քաղաքական կյանքին գործնականում մասնակցություն չի ունեցել ՍԴՀԿ անդրկովկասյան հատվածը, որի կենտրոնը Թիֆլիսում էր: Անդրկովկասում և ռուսական իրականության մեջ ՍԴՀԿ–ն հանդես էր գալիս որպես ընկերակցությունը հավատարիմ սոցիալ–դեմոկրատական կուսակցության: Բայց քանի որ այդ նույն իրականության մեջ գործում էր իրենից ավելի ուժեղ ՌՍԴԲԿ–ն՝ իր թևերով և ազդային դրսևորումներով, ուստի կարծես ավելորդ ու կրկնություն էր գառնում ՍԴՀԿ սոցիալիստական գործունեությունը Անդրկովկասում և Հայաստանում: Այդ էր պատճառը, որ նրանք որևէ ներկայացուցիչ չունեցան ոչ Հայաստանի խորհրդարանում և ոչ էլ պետական որևէ կառույցում: Ի տարբերություն հնչակյանների արևելահայ հատվածի՝ գաղութահայ մասնաճյուղերը համաձայել ու օգնել են Հայաստանի նորանկախ պետությանը: Այս առնչությամբ ՍԴՀԿ պատմագիր Ա. Կիտուրը նշում է, որ 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակման առաջին իսկ օրից արտասահմանում հնչակյան կուսակցությունը, տոգորված օրինակելի հայրենասիրությամբ, զորավիգ կանգնեց Հանրապետությանը՝ հակառակ նրա, որ իշխանությունը բռնապրակել էր ՀՅԴ–ն[162]: Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում ևս հնչակյանների երկու՝ արևելահայ և գաղութահայ հատվածներն ունեցել են տարբեր՝ ռուսամետ և արևմտյան դիրքորոշումներ: Սակայն իր ամբողջության մեջ ՍԴՀԿ–ն շարունակում էր մնալ որպես ազգային:

Հայաստանի Հանրապետությունում անշան դերակատարություն ուներ գաղափարապես մենշևիկներից գրեթե չտարբերվող ՍԴՀԿ–ն: Սակայն «սպեցիֆիկյան» կոչվող այդ կազմակերպությունն ուներ երկու վառ անհատականություն՝ Դ. Անանունը և Բ. Իշխանյանը, որոնք, Հայաստանի քաղաքական իշխանությանը ընդդիմադիր լինելով հանդերձ, ստանձնեցին որոշակի պաշտոններ և ակտիվ մասնակցություն ունեցան հանրապետության հասարակական–քաղաքական կյանքին ու հայկական անկախ պետականության կերտման գործին: Ավելին՝ ՍԴՀԿ–ն դրսևորեց ազգային վարքագիծ:

158 Տես Կայծ, 2 հուլիսի, 1919:
159 Տես ՀԱՄ, ֆ. 4033, ց. 7, գ. 58, թ. 1:
160 Տես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 279:

161 Տես ՀԱՄ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, թ. 9:
162 Տես Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887–1963), հ. Բ, Պէյրութ, 1963, էջ 11:

* * *

Հանրապետության ժողովրդավարական համակարգը հնարավորություն էր տալիս նաև ստեղծելու հասարակական կազմակերպություններ ու ծավալելու ակտիվ գործունեություն: Հանրապետությունում գործող ամենազանգվածային հասարակական կազմակերպությունը աշխատավորների շահերի պաշտպանությամբ հանդես եկող արհեստակցական միություններն էին: 1920 թ. հունվարին Երևանում գումարվեց Հայաստանի արհեստակցական միությունների համագումար, որտեղ մինչ այդ առանձին գործող 13 միություններ՝ կոպեքատիվների, ուսուցչական, փոստ–հեռագրական ծառայողների, երկաթուղային բանվորների, ջուլհականոցների, տպագրական բանվորների և այլն, համախմբվեցին մեկ ընդհանուր (միացյալ) միության մեջ: Համագումարն ընդունեց միության կանոնադրությունը և ընտրեց արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ ու նրա նախագահ[163]: Ամենազանգվածային այդ կազմակերպությունը հիմնականում ՀՅԴ կուսակցության ու կառավարության ազդեցության տակ էր: Հենց կառավարության հովանավորությամբ մտցվեց 8–ժամյա աշխատանքային օր:

Առևտրատնտեսական կյանքի աշխուժացման նպատակով 1919 թ. հիմնվեց կիսապետական–կիսահասարակական մի կազմակերպություն, որը կոչվում էր Հայաստանի կոոպերատիվների միություն (Հայկոոպ):

Մեկ տարի անց՝ 1920 թ., Հայկոոպը միավորում էր ավելի քան 280 տարատեսակ (արտադրական, սպառողական, վարկային և այլ) կոոպերատիվներ՝ հազար անդամներով: Հայկոոպի պարբերականներից էին՝ «Հայաստանի կոոպերացիան», «Աշխատավորի ձայն»[164]: Պետությունը խրախուսում էր կոոպերատիվ կազմակերպությունների գործունեությունը, ինչը բխում էր ՀՅԴ կուսակցության սոցիալիստական բնույթից:

1920 թ. փետրվարին հիմնվեց Հայաստանի կարմիր խաչը, որն իր մասնաճյուղերն ուներ հանրապետության մյուս շրջաններում: Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահն էր Գ. Զալխուչյանը: Միջազգայնորեն հանրահայտ այդ կառույցը առանձնապես զգալի օժանդակություն ցույց տվեց հայկական բանակին:

Տասնյակ հազարավոր գաղթականության առկայությունը և նրանց անկայուն ու անապահով վիճակը պարարտ հող էր ստեղծում հայրենակցական միությունների համար, որոնց թվաքանակն անցնում էր 20–ից:

Հանրապետությունում գործում էին նաև գյուղացիական, կանանց, գրական–գեղարվեստական, երիտասարդական, տեխնիկական, Հնության, բժշկական, ուսանողական, մարմնամարզական և այլ տիպի միություններ ու ընկերություններ:

Հասարակական այդ կազմակերպությունները հիմնականում նույնպես ՀՅԴ կուսակցության ու կառավարության ազդեցության տակ էին և իրենց նպատակն էին բերում պետականության ամրապնդմանը: Սակայն նրանց թվում կային նաև առանձին կազմակերպություններ, ինչպես, օրինակ, «Մայրտակ» երիտասարդական կազմակերպությունը կամ Շիրակի և Արագածոտնի գյուղացիական միությունները, որոնք բոլշևիկների ու «ձախ» թևի մյուս կուսակցությունների ազդեցության տակ էին և ավելի հաճախ իրականացնում էին քայքայիչ ու ապակայունացնող աշխատանքներ: Դպրոցներում և այլ կրթօջախներում ազդեցիկ կուսակցություններն ունեին իրենց երիտասարդական թևերը (դաշնիբտ, ժողբիտ, կոմերիտ և այլն):

Այդ ամենից բացի, իբրև նոր երևույթ Հայաստանի Հանրապետությունում դրվեց պատուտական շարժման սկիզբը: Արտաքին և ներքին ազդակներով կարևորվեց պատանեկության գործնական հմտությունների ձեռքբերումը, նրանց ֆիզիկական, նաև հոգևոր ու բարոյական դաստիարակությունը: Հայաստանում «բոյ (ոտա) պատուտների» առաջին խումբը ստեղծվել է 1919 թ. հոկտեմբերին Երևանում՝ Ասատիան փողոցում: Խմբի նախաձեռնողն էր Համլետ Նազարյանը: Պատուտների նշանաբանն էր՝ «Բարձրացիր – բարձրացրո՛ւ»: Ապրիլի 23–ը՝ զինվորական Ս. Գևորգի տոնի օրը, համարվեց «բոյ պատուտների» ընդհանուր տոն: Այդ օրը Երևանում կազմակերպվեց պատանեկության մեծ զբոսանք դեպի բնության գրկի՝ Նորքի բարձունք:

* * *

Հայաստանի Հանրապետության հասարակական–քաղաքական կյանքի գլխավոր դերակատարները, անշուշտ, կուսակցություններն էին, որոնց գործունեության հիմնական նպատակներից էր իշխանության հասնելը:

1918 թ. աշնանը առաջացավ կառավարական ճգնաժամ, որը պայմանավորված էր թուրքական ներխուժման և Բաթումի պայմանագրի հետևանքով հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակով: «Կայծը» իր առաջնորդողում նշում էր, որ Հայաստանը չարուն նակում է ի մեկ վարչապետի իսկ բնորոշած ավերակների կույտի և անձև քաոսի վիճակում[165], իսկ «Հորիզոնը» գտնում էր, որ «գործերը դանդաղ են ընթանում, ժողովուրդը դրական աշխատանք չի տեսնում»[166]: Հայաստանի պետականության հեղհեղուկ վիճակն ու նրա գլխին կախված արտաքին՝ թուրքական մահացու վտանգն իրենց դրդումն էին թողնում հայ քաղաքական կուսակցությունների գործակալների վրա, նրանց հարկադրում հնարավորին չափ լինել զուսպ ու ըմբռնողական: Բայց իրավիճակը կտրուկ փոխվեց Թուրքիայի պարտությունից ու Առաջին աշխարհամարտի իրավիճակը կտրուկ փոխվեց Թուրքիայի պարտությունից ու Առաջին աշխարհամարտի դադարեցումից հետո: Ազգային գաղափարական ուղղվածություն ունեցող ՀՅԴ–ն, Լ.Հ.Կ–ն ու Հ.Ս.Հ.Կ–ն ձեռք բերեցին լավատեսություն և ավելի մեծ ինքնավստահություն: Իսկ «ձախ» ընդդիմությունն (մենշևիկ, բոլշևիկ, էսէռ) ընկավ հոռետեսության գիրկը, քանի որ անկարող պետականություն կերտելու նպատակ չէր հետապնդում: Փաստորեն 1918 թ. աշունը հայ քաղաքական կուսակցությունների գիրքորոշումների հստակեցման շրջանն էր:

Կառավարախորհրդարանական ճգնաժամը հաղթահարվեց նրանով, որ ՀՅԴ–ն և Լ.Հ.Կ–ն 1918 թ. նոյեմբերի 4–ին կազմեցին կոալիցիոն կառավարություն՝ 4–ական նախարարներով (ՀՅԴ–ն իր ձեռքում պահեց առանցքային նախարարությունները), միաժամանակ խորհրդարանում ստեղծվեց կառավարող կուսակցությունների մեծամասնություն՝ 24 (18 դաշնակցական և 6 ժողովրդական) պատգամավորով:

Փաստորեն սոցիալիստական ծրագիր ունեցող ՀՅԴ–ն նախընտրեց կոալիցիոն կառավարություն կազմել «աջ» բուրժուական որակվող ժողովրդական, քան «ձախ» սոցիալիստական կուսակցությունների հետ՝ դրանով իսկ ընդգծելով համազգային խնդիրների գերակայությունը սոցիալ–դասակարգային նկատմամբ: Բանն այն է, որ «ձախերը» չէին ընդունում Հայաստանի անկախությունը, Թուրքահայերից կորվելը, առավել ևս՝ միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը: Մյուս կողմից՝ ՀՅԴ–ն երես դարձրեց իսկական սոցիալիստներից, քանի որ, ըստ նրա, ընկերվարային բարենորոգումները Հայաստանի Հանրապետությունում դեռևս անժամանակ էին ու չհասունացած[167]: Հարկ է նշել, որ կառավարության մեջ Լ.Հ.Կ ներգրավումը խնայեց նրա աշխատանքները, որովհետև այդ կուսակցության շարքերում կային բարձր կրթություն ու որակավորում ունեցող

[163] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 380–381:

[164] Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918–1920 թթ.), Երևան, 2005, էջ 13–14:

[165] Տե՛ս Կայծ, 2 նոյեմբերի, 1918:

[166] Հորիզոն, 26 սեպտեմբերի, 1918:

[167] Տե՛ս Դրօշակ, 1929, թիվ 4–5, էջ 70:

մեծ թվով հմուտ մասնագետներ: Ժողովրդականների մասնակցությունն առանձնապես ակներև դրսևորվեց դատարարվական բնույթի բարեփոխումների մասնակից: ՀՀ արդարադատության նախարարն էր Հ.Ժկ գործից, իրավաբան Սամսոն Հարությունյանը:

ՀՅԴ–Հ.Ժկ քաղաքական կոալիցիայի ստեղծումն ավելի ուժեղացրեց ձախերի ընդդիմությունը: 1918–1919 թթ. ձմռանը երկիրը պատած ահավոր սովը, համաճարակի և ցրտի պայմաններում «ձախ» կուսակցություններն ավելի ուժեղացրին ընդդիմադիր կեցվածքը Հ. Քաջազնունու վարչակազմի նկատմամբ: 1919 թ. հունվարի 25–ին կրկին բարձրացվեց Հ. Քաջազնունու կառավարությանը չվստահելու հարցը: Հ. Քաջազնունու նուց գոհ չէր նաև ՀՅԴ բյուրոն, քանի որ վերջինիս դուր չէր գալիս, որ վարչապետն առաջնորդվում էր դուռ պետական մտածելակերպով և աշխատում էր կուսակցությանը հեռու պահել պետական կառավարման գործերից: Խնդիրը լուծվեց նրանով, որ 1919 թ. մարտին Հ. Քաջազնունին գործուղվեց արտասահման Անտանտի պետություններից և ԱՄՆ–ից սովյալ Հայաստանի համար օգնություն կազմակերպելու խնդրով, իսկ վարչապետի պաշտոնակատար նշանակվեց Ա. Խատիսյանը:

«Ձախ» ընդդիմությունը դժգոհ էր նաև կառավարության վարած արտաքին քաղաքականությունից: Հայ–վրացական զինաթափման կապակցությամբ նրանք հավատարարպես քննադատում էին Հայաստանի կառավարության վարած կոչտ քաղաքականությունը: Եթե Հայ–վրացական հակամարտության ժամանակ կառավարող ՀՅԴ–ն և Հ.Ժկ–ն վճռականորեն հանգես էին գալիս Հայաստանի շահերի պաշտպանությամբ, ապա, օրինակ, Հայ մենշևիկները, որոնք նկատելի կախում ունեին վրաց մենշևիկներից, պահանջում էին վերջ տալ «ազգամոլամոլական այդ արկածախնդրությանը»[168]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հայկական հարցի բարձրացման համար, կուսիցիոն կառավարությունը և խորհրդարանական մեծամասնությունը նպատակահարմար չգտան եվրոպա գործուղվող կառավարական պատվիրակության կազմում ընդգրկել «ձախ» ընդդիմության (էսէռ և սոցիալ–դեմոկրատ) ներկայացուցիչների: Հարվի առնելով այն հանգամանքը, որ «ձախերը» դեմ են միայնալ Հայաստանի գաղափարին: Նրանք ենթադրում էին, թե «ձախերի» ներկայացուցիչների առկայությունը կարող է արհեստական խոչընդոտներ ու բարդություններ ստեղծել պատվիրակության կանոնավոր ու արդյունավետ գործունեության համար: Հարկ է նշել, որ Փարիզի խաղաղության խորհրդաժողովին ներկայացվող միայնալ և անկախ Հայաստան ստեղծելու պահանջը հետևողականորեն պաշտպանում էին նաև ռազմական գաղութներն ու գաղութահայաց հնչակյանները[169]: Փաստորեն Հարկական հարցի արծարծման շրջանում Հայ քաղաքական կուսակցությունների ճնշող մեծամասնությունը՝ ՀՅԴ, Հ.Ժկ, գաղութահայաց ԱՄՀ, վերաբերմամբ հնչակյաններ, սպեցիֆիկներ, արտաքսվել է Հայաստանի արևմտյան կողմնորոշման օգտին, իսկ այլ էսէռներ, մենշևիկներն ու բոլշևիկները ապավինում էին միայն ռուսական հովանավորությանը:

Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները ոչ միանշանակ մոտեցում ունեին Հայկական ուժեղ բանակ ունենալու խնդրին: Կառավարությունը, հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանները, բոլոր միջոցներով օժանդակում էր բանակի զորեղացմանը: Դրան հակառակ՝ խորհրդարանում «ձախերն» ուղղակի դեմ էին քվեարկում կամ էլ ձեռնպահ մնում բանակը ֆինանսավորելու հարցում[170]: Նրանք գտնում էին, որ պետական միջոցները պետք է ծախսել սոցիալական և ոչ թե ռազմական նպատակներով:

Ինչ վերաբերում է կուսակցությունների գործունեությանը Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական ու ներքին քաղաքականության խնդիրներում, ապա այդտեղ նույնպես դրսևորվել են տարբեր մոտեցումներ և դիրքորոշումներ: Երկրի սոցիալ–տնտեսական քաղաքականության ուղղություններից էին պետական մենաշնորհն ու բռնադրավումները, խորհրդային «ռազմական կոմունիզմ» հիշեցնող մի քաղաքականություն, որին տոն էին տալիս ՀՅԴ–ն ու հատկապես «ձախերը»: Հեռանկար չունեցող տնտեսական այդ քաղաքականությանը ՀՅԴ–ն (Հ.Ժկ–ն սկզբունքորեն դեմ էր դրան) դիտում էր որպես հարկադիր քայլ սովյալ երկրում կենսապահովման անհրաժեշտ միջոցներ հայթայթելու համար: Քաղաքական կուսակցությունները չկարողացան միասնական քաղաքականություն մշակել և տարաբնույթ էին նաև հողային խնդրի լուծման ուղիների ու բովանդակության հարցում: Նրանք միակամ էին թերևս միայն կալվածատերական հողատիրության վերացման հարցում:

Հանրապետությունում, անշուշտ, կատարվում էին շահատակություններ, անօրինություններ, բռնություններ, գլուխ էր բարձրացել «մաուզերիզմը» և այլն: Նման երևույթների մերկացումներով ավելի հաճախ հանդես էին գալիս ընդդիմադիր կուսակցությունները խորհրդարանում, մամուլում, հրապարակային դասախոսությունների ժամանակ և այլուր: «Ձախ» կուսակցությունների ամենից ավելի մտահոգում էին սոցիալական բնույթի խնդիրները, աշխատավոր ժողովրդի կենսապայմանները: Բայց նրանք հաշվի չէին առնում հանրապետության աշխարհաքաղաքական բարդ պայմանները և ֆինանսատնտեսական սուղ հնարավորությունները:

* * *

Հիրավի, ակնհայտ հակասություններ էին առաջացել ոչ միայն կառավարող կոալիցիայի և ընդդիմության, այլև հենց կոալիցիայի ներսում: ՀՅԴ–ի և Հ.Ժկ–ի միջև, որն արտաքսյալությամբ էր ոչ միայն ներքին սոցիալ–տնտեսական, այլև արտաքին քաղաքականության (Հայկական հարցի լուծման մոտեցումների և ուղիների) հարցերում: Խորացող հակասությունները բացասաբար էին անդրադառնում թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի աշխատանքների արդյունավետության վրա:

Այդ իսկ պատճառով 1919 թ. մարտի 27–ին Հայաստանի խորհուրդը օրենք ընդունեց իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և այդ ընթացքում խորհրդարանի իրավասությունները կառավարությանը հանձնելու մասին[171]: Խորհրդարանի կողմից կառավարությանը տրված օրենսդրական լիազորությունների մեկամյա ժամկետի վերջին օրերին ընդունվեցին երկու խիստ սկզբունքային, միաժամանակ առարկությունների տեղիք տվող օրենք–ակտեր, որոնք էլ ավելի խորացրին խորհրդարանական ճգնաժամը և ի վերջո դարձան նրա արձակման հիմնական շարժառիթը:

Նկատի ունենալով, որ մոտենում է Հայաստանի անկախության առաջին տարեդարձը և հաշվի առնելով մի շարք ներքին ու արտաքին հասունացած անհետաձգելի հանգամանքներ՝ կառավարությունը համապատասխանաբար մայիսի 26–ին և 27–ին ձայների մեծամասնությամբ ընդունեց «Միացյալ Հայաստանի մասին» և դրանից բխող «Հայաստանի խորհրդի հասալության մասին» օրենքները[172]: Կառավարությունը նկատի էր այն գաղափարից, որ միացյալ Հայաստանը պետք է ունենա նաև միացյալ խորհրդարան, այսինքն՝ Հայաստանի խորհուրդը պետք է համալրվի արևմտահայ ներկայացուցիչներով:

Կառավարության նախապես ընդունված այդ երկու կարևոր օրենք–ակտերի հիման վրա 1919 թ. մայիսի 28–ին՝ Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը, պաշ-

168 Տե՛ս Կայծ, 9 նոյեմբերի, 29 դեկտեմբերի, 1918:

169 Տե՛ս Երիտասարդ Հայաստան, 28 օգոստոսի, 1920:

170 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 193–194: Կայծ, 22 հունվարի, 1919:

171 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 32:

172 Տե՛ս Ժողովուրդ, 11 հունվարի, 1919:

տոնական կատարվից համապատասխան հայտարարություն Հայաստանի երկու մասերի միավորման և միացյալ ու անկախ Հայաստան հռչակելու մասին:

Անկախության տաբեդարձի տոնական արարողության կապակցությամբ կազմակերպված Հայաստանի խորհրդի ու կառավարության հանդիսավոր նիստում, որը նախագահում էր կրթության նախարար Գ. Մելիք–Ղարագյոզյանը (ՀԴԿ), վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը կարդաց Հայաստանի երկու մասերի միավորման վերաբերյալ հետևյալ պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը). «Հայաստանի ամբողջականությունը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միաձայն կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապէս միացած են իրարու անկախ պետական մթութիւն:

Ուղիղ մի տարի առաջ ռուսաստանի համագործակցությամբ ընտրված ազգային խորհուրդը յայտարարեց իրեն անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային խորհրդի կոչված կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտօնապէս պետութեանց ներկայացուցիչներուն յայտնելուց յետոյ, այս մի տարուայ մէջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գաւառներում:

1919 թ. փետրուար ամսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացեալ եւ անկախ է ճանաչում:

Այժմ Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրության սահմաններում գտնուած պատմական հայկական երկրների միացման եւ անկախության այս ակտը կատարելով Հայաստանի կառավարությունը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձեւն է Բռնվիկեան Հանրապետություն, եւ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը...:

1919 թ. մայիսի 28, Երեւան քաղաք»[173]:

Ա. Խատիսյանի ընթերցած այդ հայտարարագիրը ներկաների կողմից ընդունվեց որոտընդոստ կեցցեներով ու ծափողողությունով: 1919 թ. մայիսի 28–ին անկախության օրը, Երեւանում անցկացվեցին չքերթ, դրոշահանդես, տոնական արարողություններ, հայտարարվեց համաներում, հուշարձանի կառուցման մրցանակաբաշխություն և այլն: Միացյալ և անկախ Հայաստանի մասին հայտարարագիրը ուրախությամբ ողջունեցին պետական և հասարակական չատ կազմակերպություններ, արտասահմանյան մի չարք երկրների դիպլոմատական ներկայացուցիչներ: Հայաստանի միացման մասին կառավարության հայտարարությունը արտաքին ողջունեց նաև արեւմտահայ գործադիր մարմինը: Դրա պաշտոնական ընդունումը պատմական նշանակության իրադարձություն էր:

Սակայն «Միացյալ և անկախ Հայաստանի անկախության մասին» Հայաստանի կառավարության հայտարարությունն առաջ բերեց հանրապետությունում գործող գրեթե բոլոր կուսակցությունների՝ խորհրդարանական թե արտախորհրդարանական, «աջ» թե «ձախ», բուռն բողոքն ու դժգոհությունը: Այդ կուսակցությունների յուրաքանչյուրն ուներ իր փաստարկներն ու պատճառաբանությունները: Մի կուսակցական սուր պայքար ծավալվեց նաև կուլիսների մեջ գտնվող ՀՅԴ–ի և ՀԺԿ–ի միջև: Թեեւ միացյալ Հայաստանի մասին հայտարարության տակ փաստաթղթերում նշված են նաև ՀԺԿ նախարարների անունները, սակայն նրանցից ոմանք, այդ թվում Գ. Մելիք–Ղարագյոզյանը, հայտարարեցին, որ իրենք տեղյակ չեն եղել այդ հռչակագրին:

[173] ՀԱՄ, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84, թ. 10: Միացեալ և անկախ Հայաստան, պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 86–87: Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 152–153: Հայաստանի Հանրապետության պառլամենտի որոնումները (1918–1920 թթ.), վավ. 213, էջ 85–86:

ՀՅԴ–ն նման վճիռ ընդունելու համար հիմք էր ընդունել արեւմտահայ 2–րդ համագումարի քաղաքական բանաձեւը ապատ և միացյալ Հայաստան ստեղծելու մասին: Ընդգրկում արեւմտահայ նորընծաներ գործադիր մարմնիր Հայաստանի կառավարությանը դնելով էր մեկ ազգ, մեկ հայրենիք կարգախոսով, որ առաջ Հայաստանի միացյալ, ապատ Հայաստանի անկախության մասին և գործնական քայլեր արել միացումը իրականացնելու ուղղությամբ[174]: Հեռանալու խնդիր էր դրվում արեւմտահայ նահանգները միացնելու Հայաստանի Հանրապետությանը և այդպիսով ստեղծելու միացյալ և անկախ Հայաստան: Այդ նպատակով էր, որ Հայաստանի կառավարությունը Փարիզ մեկնող հայկական պատվիրակությանը 1918 թ. դեկտեմբերի սկզբներին հրահանգել էր խաղաղության վեհաժողովում պաշտպանել միացյալ Հայաստանի գաղափարը. այն է՝ Անդրկովկասի հայկական շրջանների և արեւմտահայ նահանգների միավորումից ստեղծել մեծ Հայաստան: Որպես դրա առաջին քայլ Հայաստանի Հանրապետության գործող կառավարությունը հայտարարվեց միացյալ Հայաստանի կառավարություն, ինչպես նաև, որպես միացյալ խորհրդարան, որոշվեց Հայաստանի խորհրդում ընդգրկել արեւմտահայ 12 ներկայացուցիչ՝ կազմի թվաքանակը հասցնելով 58–ի: Փարիզում ընթացող խաղաղության խորհրդաժողովի համալնակատելի վրա Հայաստանի կառավարությունը նման պաշտոնական հայտարարությամբ ցանկանում էր դաշնակից տերություններին հասկացնել, որ ինքը վճռականորեն տեր է կանգնում միասնական և անկախ Հայաստանի գաղափարին:

Կառավարության այդ որոշման դեմ բողոքեցին թե՛ ձախերը՝ սոցիալ–դեմոկրատներն ու էսէռները, և թե՛ կառավարության մաս կազմող աջակողմյան ՀԺԿ–ն ու նրան գաղափարակից ՀՍՌԿ–ն: ՀԺԿ–ն և ՀՍՌԿ–ն այդ էին ոչ թե միացյալ Հայաստանի գաղափարին, այլ մայիսի 28–ի հայտարարագրի այն հատվածին, որում Հայաստանի Հանրապետության գործող կառավարությունն իրեն հայտարարում էր միացյալ Հայաստանի կառավարություն: Բանն այն է, որ ՀԺԿ–ն, լինելով գաղափարակից ու համախոհ արեւմտահայ ՀՍՌԿ–ին, զեկավարվում էր վերջինիս առաջնորդ, Ազգային պատվիրակության զեկավար Պողոս Նուբար փաշայի ցուցումներով: Իսկ Պողոս փաշան, մրցակցելով ՀՅԴ–ի հետ, ինքն էր հավակնում դառնալու միացյալ Հայաստանի վարչապետ և Հայաստանը կառավարելու Փարիզից: Նա նուիրեալ կազմել էր տոպիարկին կառավարություն:

ՀԺԿ և ՀՍՌԿ գժգոհության մյուս պատճառն այն էր, որ առանց Հայաստանի խորհրդի գիտության ստեղծել էին հրավիրվում Երեւանի արեւմտահայ գործադիր մարմնի 12 ներկայացուցիչներ, որոնք կուսակցական պատկանելությամբ հիմնականում դաշնակցականներ էին: Դա նշանակում էր, որ ՀՅԴ–ն խորհրդարանում դառնալու էր ակնհայտ ժեծամասնություն:

Ժողովրդականներն ու ռամկավարները գտնում էին, որ միացյալ Հայաստանի հայտարարագիրը պետք է ընդունվեր հայկական երկու հատվածների՝ արեւելահայերի և արեւմտահայերի փոխադարձ համաձայնությամբ: Մանավանդ՝ Փարիզի ազգային պատվիրակության հետ համախորհուրդ[175]: Եվ ահա այս ամենը պատճառ հանդիսացավ կառավարության մեջ ներքուստ ազգային ծայրաստիճան սրման, ինչի հետևանքով թայլայվեց ՀՅԴ–ՀԺԿ քաղաքական կուլիսիան: Ինչ վերաբերում է «ձախ» կուսակցություններին, ապա նրանց բողոքի ու դժգոհության գլխավոր պատճառն այն էր, որ նրանք սկզբունքորեն դեմ էին ոչ միայն միացյալ Հայաստանի գաղափարին, այլև ընդհանրապես Հայաստանի անկախությանը և գտնում էին, որ նա կրկին պետք է միանա Ռուսաստանին: Մայիսի 28–ի ակտի դեմ բողոքեց նաև ՍԴԿ–ն:

[174] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)..., էջ 305–306:
[175] Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 116:

Մեկնաբանական պայքարի բարձրակետը Հունիսի 4–ին հրավիրված խորհրդարանի նախավերջին նիստն էր, երբ ժողովրդականները, սոցիալ–դեմոկրատները և էսէականները հանդես եկան բողոքի Հայաստաններում և ցուցադրաբար հեռացան խորհրդարանից: Միաժամանակ ընդդիմադիր բոլոր կուսակցությունները (բացառությամբ էսէականների) բոյկոտ հայտարարեցին առաջիկա նոր խորհրդարանի ընտրությունների: Եվ չէր մնում այլ բան, քան հաջորդ օրը՝ Հունիսի 5–ին, արձակուրդ հայտարարելով, փաստորեն լուծարել խորհրդարանը: ՀԺԿ նախարարները հետ կանչվեցին կառավարությունից, և այգպիսով վերջ տրվեց ՀՅԴ–ՀԺԿ կոալիցիային:

ՀՅԴ–ՀԺԿ–ՍՈՒ միջկուսակցական վեճերը հարթելու նպատակով 1919 թ. աշնանը Փարիզից Երևան ժամանեց ազգամտաՀայերի մի պատվիրակություն (Վ. Թեքեյան, Ն. Տեր–Ստեփանյան, որոնց միացավ Ս. Հարությունյանը), որը բանակցեց Հայաստանի իշխանությունների հետ, սակայն կողմերի անզիջողականության պատճառով համաձայնության չեկան: Պատվիրակությունը պնդում էր Ցողոս փաշային միացյալ Հայաստանի վարչապետի պաշտոնում նշանակելու պահանջը, որն անընդունելի էր ՀՅԴ–ի համար: Ակներև է, որ այդ տարաձայնությունների հիմքում ընկած էին ավելի շատ կուսակցական–հատվածական ու պատմախնդրական հաշիվները, քան համազգային ու ազգային գերագույն շահերը:

Ստացվեց այնպես, որ երկրորդ գումարման (ընտրովի) խորհրդարանի ընտրություններին մասնակցեց միայն երկու կուսակցություն՝ ՀՅԴ–ն և էսէականը: Մյուսները կա՛մ բոյկոտեցին, կա՛մ սոցիալական (ընտրազանգվածի) թույլ հենարանի պատճառով հույս չունեին, թե հաղթություն կհասնեն: Ի դեպ՝ Գ. Նուբարի փաշայի հրահանգով ընտրությունները բոյկոտեցին նաև ռամկավարները, որոնք մեծ ազդեցություն ունեին արևմտահայ գաղթականության շրջանում: Խորհրդարանի ընտրությունները բոյկոտեցին նաև բոլշևիկյան կազմակերպությունները, որոնցից ամենաակտիվը երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միությունն էր՝ Ղուկաս Ղուկասյանի գլխավորությամբ: Նախընտրական փուլում «Սպարտակ» կազմակերպությունը կոչ հրապարակեց ընտրությունները բոյկոտելու մասին[176]:

Ընտրությունների արդյունքում պատգամավորական 80 տեղերից 72–ը զբաղեցրեց ՀՅԴ–ն, իսկ 4–ը՝ էսէականը: Մյուս 4 պատգամավորները կուսակցական պատկանելություն չունեին: Հարկ է նշել, որ ժողովրդականները և սոցիալ–դեմոկրատ մենշևիկները խորհրդարանի ընտրությունների բոյկոտից հետո այլևս գործուն մասնակցություն չունեցան Հայաստանի պետական կյանքին, սակայն ՀԺԿ–ն պատգամավորական ներկայացուցիչներ ուներ քաղաքային դումաներում և գավառական զեմստվոներում, որն ինքնին լուրջ ընդդիմություն էր:

1919 թ. սեպտեմբերին Երևանում գումարվեց ՀԺԿ երկրորդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիր, փաստորեն հայ քաղաքական կուսակցություններից առաջինը, ծրագրային առումով ամրագրելով միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու նպատակը[177]: Մեկ ամիս անց միացյալ և անկախ Հայաստանի տեսլական ծրագրային ձևակերպում ստացավ ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովում[178]: Ինչ վերաբերում է սոցիալ–դեմոկրատ մենշևիկներին, ապա ընտրությունների բոյկոտից հետո նրանց առավել շրջհայաց հատվածը՝ «անկախ սոցիալիստները» կամ «գուրարականները» (Ա. Զուբարյանի անունով), 1920 թ. Հունվարին միավորվեցին սպեցիֆիկների կազմակերպությունը՝ հիմնելով Հայաստանի սոցիալ–դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՍԴԲԿ)[179]: Ի դեպ՝ վերջինս Հայաստանի Հանրապետության եզակի ձախակողմյան կուսակցություններից էր, որ ընդունեց ոչ միայն Հայոց անկախ պետականությունը, այլև միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը:

Այսպիսով խորհրդարանում բացարձակ գերակշռություն ստացավ ՀՅԴ–ն՝ իր 72 պատգամավորական տեղերով: Ինքներն հասկանալի է, որ 8 պատգամավորներից բաղկացած ընդդիմությունը չէր կարող քիչ թե շատ լուրջ մրցակցություն առաջացնել: Էսէականները այդ խորհրդարանում նույնպես շարունակեցին իրենց նախկին քաղաքական ուղեգիծը՝ վարելով «հետևողական ընդդիմության գործունեություն»: Նրանք համակրական վերաբերմունք էին արտահայտում Հայաստանում ակտիվացող բոլշևիկների հանդեպ: Դա արտահայտվեց նրանով, որ էսէական խմբակցությունը հարցադրում է արեց ազատ արձակելու ներքին գործերի նախարարության հրահանգով 1920 թ. սկզբներին ձերբակալված մի քանի բոլշևիկ ակտիվիստներ: Իշխանությունները հարկադրված գնացին զիջման: Եթե ընդդիմությունը շատ թույլ էր երկրորդ գումարման խորհրդարանում, ապա բավականին ուժեղ էր նրանից դուրս: Ընդդիմադիր կուսակցությունները, տեսնելով, որ առանձին–առանձին չեն կարողանում ինչպես հարկն է հակազդել կառավարող կուսակցությանը, իշխանությունների դեմ արդյունավետորեն պայքարելու համար ժամանակ առ ժամանակ միավորվում էին, հանդես գալիս համատեղ հայտարարություններով, բողոքներով ու համախոսակցություններով: Օրինակ հակակառավարական համատեղ հայտարարություն է արձակագրվել ընդդիմադիր 4 կուսակցությունների՝ Ալեքսանդրապոլի կազմակերպությունների կողմից[180]: Ընդդիմությունը կառավարող կուսակցությանը մեղադրում էր ամեն տեսակի մեղքերի մեջ: Հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր կացության պատճառը վերագրվում էր կառավարությանը: Ընդդիմադիր մամուլը՝ «Ժողովուրդը», «Ժողովրդի ձայնը», «Սոցիալիստ հեղափոխականը», «Աշխատանքի դրոշակը», «Հայաստանի ձայնը», «Կայծը», «Նոր կյանքը» և այլն, ազատորեն ու անխիստ քննադատում էր կառավարությունը, նրա վարած քաղաքականությունը, պաշտոնյաների թերացումները, անիրազեկությունը, չհաստակությունները:

Սակայն հանրապետությունում գործող ընդդիմադիր քաղաքական ուժերից Հայաստանի իշխանությունների համար ամենասնահաշտ ու ամենամտանգավորը բոլշևիկներն էին: 1919 թ. կեսերից մի քանի հարյուր հայ բոլշևիկներ, հալածվելով վրացական և ադրբեջանական իշխանությունների կողմից, ապաստան գտան Հայաստանում: Գալով Հայաստան՝ նրանք խոստացան գրավել շեղոք դիրք և չծավալել հակապետական գործունեություն: Իր հերթին, Հայաստանի կառավարությունը ցուցաբերում էր հանդուրժողականություն: Բոլշևիկներից շատերը նույնիսկ ստացան տարբեր պաշտոններ պարենավորման, կրթության, կապի, պետական վերահսկողության և այլ ոլորտներում: Սակայն նրանք մտադիր չէին համակերպվելու կացությանը: Նույն տարվա սեպտեմբերին ՌԿ(բ)Կ Կովկասի երկրամասային կոմիտեի ներկայացուցիչներ Ս. Կասյանի և Ա. Մռավյանի նախաձեռնությամբ Երևանում գումարվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցություն, որտեղ մշակվեց նրանց մարտավարությունը, և ստեղծվեց կենտրոնական զեկավար մարմին՝ Հայաստանի կոմիտե[181]: Իսկ 1920 թ. սկզբներից Հայաստանի սահմաններից դուրս ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունները (կարմիր բանակի հաղթական մուտքը Կովկաս, խորհրդաբեմատական մերձեցման մտադրությունները, Հայաստանի դե ֆակտո ճանաչումը Անտանտի երկրների կողմից և այլն) նպաս-

[176] Տես նույն տեղում, ֆ. 4012, ց. 1, գ. 11, թ. 1:

[177] Տես Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցութեան ընդունուած Բ համագումարում 1919 թվի 7–15 սեպտեմբերի, Երևան, 1919, էջ 3:

[178] Տես Ղակոբյան Ա., ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովը, Երևան, 1994, էջ 28:

[179] Տես ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1:

[180] Տես նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 36, թ. 1:

[181] Տես նույն տեղում, ֆ. 405, ց. 1, գ. 65, թ. 7–8:

տավոր պայմաններ ստեղծեցին Հայաստանի բոլշևիկների ու նրանց ղեկավար մարմնի՝ Հայաստանի կոմիտեի գործունեության ակտիվացման համար: Քաղաքական այդպիսի պայմաններում 1920 թ. հունվարին Երևանում հրավիրվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որտեղ ընտրվեց Հայաստանի կոմիտեի նոր կազմ, և քաղաքական խնդիր դրվեց «պատրաստ լինել՝ իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կը լինի կապվել բանվորա-գիւղացիական Ռուսաստանի հետ»[182]: Նման կապի հնարավորություն ստեղծվեց 1920 թ. ապրիլի 28-ին՝ Ադրբեջանի խորհրդայնացումով:

[182] Կասեան Ս., Ձախութեան հիվանդութիւնը մեզանում (Նոր աշխարհ, Թիֆլիս, 1922, թիվ 2, էջ 11): Հայ ժողովրդի պատմություն (ՀԺՊ), հ. 7, Երևան, 1967, էջ 79:

Աղբյուրը՝ *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 66-78: